

## Կարծիք

### ՀՀ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի արդյունահանման նախագծային փաստաթղթերի ու ՇՄԱԳ-ի մասին

ՀՀ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի արդյունահանման նախագծային փաստաթղթերն ու ՇՄԱԳ-ի (ներառյալ 2016 թվականին ներկայացված՝ Շահագործման փոփոխված նախագիծը և արդյունահանման համալիրի փոփոխությունների ՇՄԱԳ-ը) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագծային փաստաթղթերը մշակված ու կազմված են մասնագիտական բավականին բարձր չափանիշներով: Սակայն նախագծում և ՇՄԱԳ-ում առկա են ***սկզբունքային, էական թերություններ և բացթողումներ:***

Թերի են հանքավայրի շահագործման ազդակիր գետային էկոհամակարգերի ներկայիս հղումային վիճակի (reference conditions) համալիր գնահատականները, հանքավայրի շահագործման և հետշահագործումային ժամանակահատվածներում գետային էկոհամակարգերի որակի դինամիկայի գնահատման վերահսկողական համալիր (հիդրոմորֆոլոգիա, հիդրոլենսաբանություն, հիդրոքիմիա) մոնիտորինգային ծրագրերը: Առկա են միայն գետավազանների և ստորերկրյա ջրերի հիդրոքիմիական և ջրաչափական մոնիտորինգային ծրագրերը: Նախագծային փաստաթղթերում ու ՇՄԱԳ-ում հաշվի չեն առնված ազդակիր տարածքների շրջակա միջավայրի, մշակաբույսերի, էկոհամակարգային ծառայությունների վրա հնարավոր ներգործության որոշ էֆեկտներ, որոնք առաջանում են կամ կարող են առաջանալ հանքավայրերի շահագործման ընթացքում: ՇՄԱԳ-ում բացակայում է հանքավայրի շահագործման հետևանքով առաջացող ազդեցության էֆեկտների, մասնավորապես բույսերի և հանքային ջրերի քիմիական բաղադրության վերահսկողական մոնիտորինգի և գնահատման ծրագրերը:

**Առաջին թերություն:** Ամուլսարի հանքավայրի արդյունահանման ՇՄԱԳ-ում բացակայում են Արփա, Դարբ, Որոտան գետերի և դրանց վտակների հատակային սուբստրատների մորֆոլոգիական և քիմիական հետազոտություններն ու ներկայիս հղումային վիճակի գնահատականները: Մոնիտորինգի ծրագրում հատակային սուբստրատների մոնիտորինգ և որակի դինամիկայի գնահատում նույնպես նախատեսված չէ:

**Երկրորդ թերություն:** ՇՄԱԳ-ում բացակայում են Արփա, Դարբ, Որոտան գետերի և դրանց վտակների էկոհամակարգերի ներկայիս հղումային վիճակի հիդրոմորֆոլոգիական գնահատականները: Մոնիտորինգի ծրագրում գետերի հիդրոմորֆոլոգիական մոնիտորինգի բաղադրիչները ընդհանրապես բացակայում են: Նախատեսվում է իրականացնել միայն ջրաչափական մոնիտորինգ:

**Երրորդ թերություն:** ՇՄԱԳ-ում բացակայում են Արփա, Դարբ, Որոտան գետերի և դրանց վտակների էկոհամակարգերի հիդրոկենսաբանական ներկայիս հղումային վիճակի գնահատականները: Հիդրոկենսաբանական մոնիտորինգ ընդհանրապես նախատեսված չէ:

**Առաջարկ:** Անհրաժեշտ է մինչև հանքի բացումը ուսումնասիրել Արփա, Դարբ, Որոտան գետերի և դրանց վտակների, Կեչուտի ու Սպանդարյանի ջրամբարների հատակային սուբստրատներն ու դրանց քիմիական կազմը, գնահատել և ֆիքսել նշված ազդակիր գետավազանների հիդրոմորֆոլոգիական ու հիդրոկենսաբանական առկա հղումային վիճակները, ջրամբարների հիդրոկենսաբանական առկա հղումային վիճակները (ecological condition, ecological status): Կազմել և հանքի շահագործման ընթացքում ու փակման փուլում իրականացնել նշված գետային էկոհամակարգերի (գետային ավազանների և ենթավազանների) և ջրամբարների՝ ԵՄ ՁՇԴ սկզբունքներին և մեթոդներին համահունչ վերահսկողական համալիր մոնիտորինգի և գնահատման ծրագիր: ԵՄ ՁՇԴ սկզբունքներով և մեթոդներով իրականացվող ջրային էկոհամակարգերի մոնիտորինգը առավել ընդգրկուն և ինֆորմատիվ է, արդի ժամանակներում այն ավտերնատիվ գործնականում չունի: Միայն ըստ ՁՇԴ-ի համալիր մոնիտորինգի իրականացումը թույլ կտա գործնականում ստուգել ու վերահսկել ՇՄԱԳ-ի, օգտագործված կանխատեսումների մոդելների ու նախագծային հաշվարկների գիտական հիմնավորվածություններն ու ճշմարտացիությունը: Միաժամանակ գետավազանների համալիր մոնիտորինգի իրականացումը թույլ կտա բացահայտել, գնահատել, օպերատիվ և արդյունավետ կառավարել հանքավայրի շահագործման ընթացքում ու ռեկուլտիվացիոն փուլերում առաջացող բնապահպանական ռիսկերը և ներգործության էֆեկտները, կազմակերպել այդ ռիսկերի նվազեցման, ներգործության հետևանքների մեղմման ու չեզոքացմանն ուղղված համարժեք գործընթացներ:

**Չորրորդ թերություն:** Կապված է հանքավայրի ազդեցության անմիջական գոտում գտնվող բնակավայրերում ու հարակից տարածքներում մշակվող մշակաբույսերի և բնակչության կողմից օգտագործվող վայրի բույսերի քիմիական բաղադրության հնարավոր փոփոխությունների և դրա հետևանքների գնահատման հետ: Հանքավայրի շահագործման հետևանքով Գորայք, Սարավան (ներառյալ Սարալանջը, Ուղեձորը), Գնդեվազ, Ջերմուկ (ներառյալ Կեչուտը) համայնքների գյուղատնտեսությունը և հարակից տարածքների էկոհամակարգային ծառայությունները կհայտնվեն ռիսկային վիճակում: Սակայն ՇՄԱԳ-ում բացակայում են մշակաբույսերի և օգտագործվող վայրի պտուղների, հատապտուղների, բանջարաբույսերի քիմիական բաղադրության հետազոտությունների տվյալներ ու գնահատականներ, հանքավայրի շահագործման հնարավոր բացասական ներգործության էֆեկտների վերլուծություններ և գնահատումներ՝ այդ բույսերի բերքի քիմիական բաղադրության, որակի և քանակի վրա: Խնդիրը կարևոր է, որովհետև մշակաբույսերի և բնակչության կողմից օգտագործվող

վայրի բույսերի քիմիական ադոտոտումը կարող է ունենալ էկոլոգիական, սոցիալական, տնտեսական և, որ ամենակարևորն է՝ առողջապահական, լուրջ բացասական հետևանքներ ազդակիր համայնքների բնակչության համար: Այն նույնիսկ էապես կարող է նվազեցնել հանքավայրի շահագործման արդյունքում սպասվելիք սոցիալ-տնտեսական դրական սպասելիքները:

**Առաջարկ:** Ներկայումս, մինչև հանքի բացումը, ուսումնասիրել ազդակիր բնակավայրերում և հարակից տարածքներում մշակաբույսերի և բնակչության կողմից օգտագործվող վայրի պտուղների, հատապտուղների, բանջարաբույսերի (ընտրված ինդիկատորային կամ էական նշանակություն ունեցող որոշ տեսակներ) քիմիական բաղադրությունը և ֆիքսել առկա վիճակը: Այնուհետև հանքի շահագործման և փակման ընթացքում իրականացնել ընտրված բուսատեսակների քիմիական բաղադրության վերահսկողական մոնիտորինգ:

Մշակաբույսերի և բնակչության կողմից օգտագործվող բույսերի քիմիական բաղադրության մոնիտորինգը թույլ կտա բացահայտել օգտագործվող բույսերի բերքի քանակի կամ որակի անկման, էկոհամակարգային ծառայությունների հնարավոր նվազման պատճառներն ու կապը հանքավայրի շահագործման հետ, անհրաժեշտության դեպքում գնահատել առաջացող վնասները, մշակել դրանց վերականգման կամ արդարացի փոխհատուցման պլաններ ու սխեմաներ:

**Հինգրորդ թերություն:** Կապված է Ջերմուկի հանքային ջրերի բաղադրության վրա Ամուլսարի հանքավայրի շահագործման հնարավոր ազդեցության վերահսկման ծրագրի բացակայության հետ: Նախագծային փաստաթղթերում ներկայացված են իզոտոպային հետազոտությունների տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ Ջերմուկի հանքային աղբյուրները կապ չունեն Ամուլսարի վրա առկա ստորգետնյա և մակերևութային ջրերի հետ: Սակայն դա ներկայիս, մինչև հանքավայրի շահագործումը հղումային վիճակն է: Հաշվի առնելով Ջերմուկի հանքային ջրերի կարևորությունը, այս հարցը մեկ հետազոտության արդյունքների հիման վրա չի կարող համարվել փակված: **Առաջին.** բերված եզրակացության գիտական հիմնավորվածության համար անպայման պետք է իրականացվեն կրկնական հետազոտություններ այլ իզոտոպներով ու հասանելի այլ մեթոդներով:

**Երկրորդ.** ներկայումս, մինչև հանքավայրի շահագործումը, Ջերմուկի հանքային ջրերի և Ամուլսարի ջրերի միջև կապի բացակայությունը դեռևս միանշանակ չի նշանակում, որ հանքավայրի շահագործումը սկսելուց հետո, երբ տեղի կունենան հողային աշխատանքներ, ապարների և հողաշերտերի տեղաշարժեր, պայթեցումներ, տարիներ շարունակ հազարավոր տոննաներով քիմիական միացությունների օգտագործում տեղանքում, մինչև 600 հա մակերևույթով տարածքների արտաքին բնական ծածկույթների և լանդշաֆտների փոփոխություններ, ջրային մարմինների միջև կապ չի

առաջանա կամ Ամուլսարի ջրային մարմիններից դեպի Ջերմուկի հանքային ջրային մարմին ներթափանցում տեղի չի ունենա:

Ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես նշված է, որ նմուշների անալիզներն իրականացվել են Չեխիայում: Իսկ իզոտոպային հետազոտությունները Մեծ Բրիտանիայում: Կարծում ենք, որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի արդյունահանման՝ շրջակա միջավայրի վրա ներգործության ***մոնիտորինգի ծրագիրը պետք է իրականացվի Հայաստանում՝ պատասխանատու պետական մարմինների և գիտահետազոտական կառույցների մասնակցությամբ, իսկ տվյալները պետք է հասանելի լինեն հասարակությանը:***

***Անհրաժեշտ է պարտադրել «Գեոթիմին» Հայաստանում ստեղծելու իզոտոպային հարաբերությունների մասս-սպեկտրաչափական հետազոտությունների լաբարատորիա, որի հիմնական նպատակը և գործառույթը պետք է լինի Ջերմուկի հանքային ջրերի վրա հանքավայրի շահագործման ազդեցության վերահսկողությունը և ցանկացած բացահայտումը:***

Չեխիայի կամ մեկ այլ ռեֆերենտ լաբարատորիայում որոշակի քանակի մոնիտորինգային նմուշների կրկնական անալիզների իրականացումը ողջունելի է: Նման կրկնական վերստուգիչ անալիզների իրականացումը ներկայումս ընդունված պրակտիկա ու գործելաոճ է տեխնոլոգիապես զարգացած երկրներում:

Գեոթիմը կարող է հայտարարել, որ հիմա էլ են տվյալները հասանելի, ինչի հետ մենք համաձայն ենք: Սակայն, ներկայումս հանքավայրը դեռ չի շահագործվում և տարածքը գտնվում է անաղարտ վիճակում, ուստի մոնիտորինգային տվյալների հասանելիությունը բնական է: Հանքավայրի շահագործման փուլում ազդակիր գոտու շրջակա միջավայրը անխուսափելիորեն և օբյեկտիվորեն կենթարկվի փոփոխությունների: Կպահպանվի արդյոք տվյալների հասանելիության ներկայիս մակարդակը: Հասարակությունը պետք է վստահ լինի, որ շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա նույնիսկ բացասական մեծ ազդեցության բացահայտվելու դեպքում, տվյալները հասանելի կլինեն հասարակությանը:

**Պետությունը և հասարակությունը պետք է վստահ լինեն, որ հանքավայրի շահագործման փուլում շրջակա միջավայրի և հատկապես Ջերմուկի հանքային ջրերի վրա ցանկացած ազդեցություն կբացահայտվի արդեն նախնական փուլերում, երբ ազդեցությունները կլինեն վերահսկելի և դարձելի, իսկ հետազոտությունների տվյալներն անպայման հասանելի կլինեն:**

***Առաջարկ:*** ՇՄԱԳ-ում անհրաժեշտ է ներառել և հանքավայրի գործարկման, շահագործման և ռեկուլտիվացիոն ժամանակահատվածներում իրականացնել Ջերմուկի հանքային ջրերի բաղադրության հատուկ մոնիտորինգային ծրագիր՝ օգտագործելով առնվազն անալիտիկ երկու մեթոդ (իզոտոպային (ներառելով առնվազան ջրածնի, ածխածնի, թթվածնի, ազոտի և ծծմբի իզոտոպները)

հարաբերությունների և հազվագյուտ (ներառելով լանթանոիդների և հազվագյուտ այլ տարրեր) տարրերի հարաբերությունների մեթոդները):

**Վեցերորդ թերություն:** 2016 թվականի մայիսի 26-ին ՀՀ կառավարությունը ընդունել է «ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 539-Ն որոշումը: Կառավարման պլանի նախագիծը քննարկման էր ներկայացվել դեռևս 2015 թվականին: Կառավարման պլանում մանրամասն քննարկված և ներկայացված է Որոտանի գետավազանի վիճակը, ներկայացված են գետավազանի կառավարման միջոցառումների ցանկը: Սակայն ՇՄԱԳ-ում որևէ անրադարձ չկա նշված պլանին: Ստացվում է, որ պետությունը պլանավորում է գետավազանի կառավարում և միջոցառումներ, իսկ հանքարդյունաբերական ձեռնարկությունը, որի գործունեությունը իրականության մեջ կունենա ազդեցություն գետավազանի էկոհամակարգի վրա, իր ծրագրերը, գետավազանի վրա հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումները չի ներդաշնակեցնում պետական ծրագրի հետ:

*Այստեղ առաջանում է ոչ միայն Որոտանի գետավազանի հետ կապված ջրօգտագործման, բնապահպանական նպատակների, կառավարման ու որակի բարելավման միջոցառումների համադրելիության խնդիր, այլ նաև իրավական խնդիր.*

*մի կողմից կառավարության որոշումով ընդունվում է գետավազանի կառավարման պլան, մյուս կողմից, կառավարությունը, ի դեմս ԲՆ-ի տալիս է գետավազանի վերին հոսանքում հանքարդյունաբերական գործունեության թույլտվություն: Ինչ կլինի այն դեպքում եթե «Գեոթիմի» գործունեությունը հակասի ջրավազանային կառավարման պլանին կամ առնվազն տարրերվի հաստատված պլանից:*

Սեյրան Մինասյան

30.11.2016

Երևան